ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

օգոստոսի 2024 թվականի №-Ա

«ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի մայիսի 22-ի №170-Ա որոշմամբ «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Որոտան-7» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0497 լիցենզիան (այսուհետ՝ №0497 լիցենզիա)՝ 15 տարի գործողության ժամկետով,

բ) էլեկտրական էներգիայի առևտրային հաշվառման ավտոմատ համակարգի միջոցով իրականացված վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի ապրիլ և մայիս ամիսներին գերազանցվել է №0497 լիցենզիայի պայմաններում ամրագրված հաշվարկային (730 կՎտ) և տեղակայված (750 կՎտ) հզորությունները և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը սույն թվականի հունիսի 27-ից հարուցել է վարչական վարույթ՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորված գործունեությունն իրականացնելիս №0497 լիցենզիայի պայմանների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2024 թվականի հուլիսի 11-ի գրությամբ հայտնել է, որ 2023 թվականին տեղի է ունեցել սեփականատերերի փոփոխություն: Այդ պահին Կայանում տեղադրված 5 հիդրոտուրբիններից աշխատել է միայն մեկը, իսկ 2017 թվականի հունիսի 2-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պետական փորձաքննական ԲՓ №52 եզրակացության համաձայն՝

Կայանի հաշվարկային հզորությունը կազմում է 1320 կՎտ: Ընկերության կողմից նախաձեռնվել է Կայանի վնասված հիդրոտուրբինների վերականգնման աշխատանքները և դրան զուգահեռ նախաձեռնել են Կայանի վերակառուցման համար անհրաժեշտ քայլերի իրականացումը: Ընկերությունը հայտնել է նաև, որ ստացել են 2024 թվականի հունիսի 18-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պետական փորձաքննական ԲՓ №087-24 եզրակացությունը, համաձայն որի Կայանի հաշվարկային հզորությունը կազմելու է 2451 կՎտ և դիմել են քաղաքաշինության կոմիտե՝ պետական համալիր փորձաքննություն իրականացնելու համար և ամբողջական փաստաթղթերը պատրաստ լինելուց հետո կներկայացվեն Հանձնաժողով՝ լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու համար: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով Ընկերության ֆինանսական ծանր վիճակը, խնդրել է կայացնել մեղմ որոշում:

դ) №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ կետի համաձայն՝ Կայանի հաշվարկային հզորությունը կազմում է 730 կՎտ, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացնում է №0497 լիցենզիայի պայմանների 9-րդ կետում նշված սարքավորումներով (երեքական հիդրոտուրբին և գեներատոր), որոնց փաստացի տեղակայված հզորությունը կազմում է 750 կՎտ:

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Կայանում փաստացի տեղակայված են հինգ հիդրոագրեգատներ՝ №0497 լիցենզիայի պայմաններում ամրագրված երեք հիդրոագրեգատների փոխարեն, որի հիմքով խախտվել են №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ և 9-րդ կետերի պահանջները,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը և «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ և 9-րդ կետերի պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից Ընկերության գործունեությունը համապատասխանեցնել №0497 լիցենզիայի պայմաններին,

2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է դիմել Հանձնաժողով՝ №0497 լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու համար.
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
օգոստոսի 2024թ.